



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N 58-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԳՆԵԼ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ
ԱՐՍԵՆ ԽՈՒԴՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ «ԲԵՂՈԱՐ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ
ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԱՐԱԾԵՑՆԵԼՈՒ
ՀՆԱՐԱՎՈՐ ԽՈՂԸՆԴՈՏՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 42-րդ կետի պահանջով, հիմք
ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 նոյեմբերի 2021 թվականի թիվ 131
որոշումը և բնակիչների դիմումները՝

Արենի համայնքի ավագանին որոշում է՝

- Ընդառաջել Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչներ՝ Գնել Ղազարյանի և
Արսեն Խուդոյանի դիմումներին և առաջարկել համայնքի ղեկավարին ստեղծել
ժամանակավոր հանձնաժողով դիմումներում բարձրացված հարցերը բազմակողմանի
և համապարփակ ուսումնասիրելու նպատակով:
- Արենի համայնքի ավագանու 15 նոյեմբերի 2021 թվականի թիվ 131 որոշման
պահանջների խախտման հանգամանքներ արձանագրելու պարագայում ձեռնարկել
անհրաժեշտ միջոցներ «ԲԵՂՈԱՐ» ԲՀ-ի վարձակալության պայմանագրերը լուծելու
ուղղությամբ:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՍՍՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ *AMB*
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱԶԻԿ *Grigoriyan*
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱԶԵ *Khazatsyan*
ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ *Chatsuryan*
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՆԵԼ *Khazaryan*
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ *Khazaryan*
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ *Martirosyan*
ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ *Mirzoyan*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



[Handwritten signature]

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ